



THE UNIVERSITY OF CHICAGO

891.99
R-91

26 NOV 2011

891.99

R-91

us.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ



(Հր. հին աւանդ)

ԵՐԵՎԱՆԻ ՏԿԱՐԱՆ „ԿՈՒԼՏՈՒՐԱ“ ԲԷՆԵՐՈՒԹԵԱՆ ՓՈԳ. № 7.
1914 թ.

1001
4632

891.99 | Հայաստան
R-91 | Հայաստանի
Հանրապետություն

22 | 5/10/21 | [Signature]

1001
4632

13 0 JUL 2073
1973 JUL 0

60898

ՉԱՐ ԿԱՆԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ

(Հրէական հին աւանդութիւն)։

Անհուն ժամանակներ մեզանից առաջ Սաղայէլը գեռ
երկնքումն էր։

Նա հայր Եհովայի մերձաւոր իշխանն էր, Նրա խորհրդա-
կիցը և սիրելին։

Սաղայէլը հզօր էր, որովհետեւ Արարչի դրած օրէնքների
կատարման հաւատարիմ հսկողն էր։

Սրա ձեռքին էր գտնւում այն դիւթական մտրակը, որ հիւս-
նած էր յաւերժահարսերի *) թել-թել վարսերից, և որով նա
թէ բարիք էր սփռում Աստուծոյ սիրելիների վրայ և թէ պա-
սիժներ թափում Ամենազօրի կամքին դէմ գնացող ատելիների
գլխին։

Եւ խաղաղ երջանկութեան ակնքներով ծփում էր տիեզերքը-
և անարատ սիրոյ բոյր ծաղիկներով փթթում էր աշխարհը։

Երկրի բնակիչներն էլ ապրում էին համերաշխ հոգով և
զուարթ սրտով։

Մարդիկ, կանայք, գայլ ու գառներ, շուն, նապաստակ,
կատու և մուկ, Սղոէս ու հաւ, միջատ, թռչուն, ձուկ, օձ, սո-
ղուն՝ զոյգ-հաւասար՝ միշտ իրար հետ, միշտ երգ ու տաղ, խաղ
ու ծիծաղ, անվիշտ, ուրախ, անհոգ, անցանք...

Չկար ձմեռ, այլ միշտ գարուն, զով եղանակ, սէղ ու ծա-
ղիկ՝ բիւր-բերանեւանգ, պտուղն առան հազար տեսակ...

Արեւ, լուսին՝ անհուն վերից, հովիկ, զեփիւն՝ ջրնջ եթերից.
աղբիւր, առուակ՝ դաշտ ու ձորից. և՛ ժպտում էին, և՛ խնդում
փառ-փառ. մերթ օրօր սուլում, մերթ պար բոլորում, սահում
հեղաբար...

*) Յաւերժահարսերի գաղափարն այս աւանդութեան մէջ հաւանորէն
Հիւսններից է մտել։

Հրճուում էր ծերունի Եհովիան՝ նայելով իր ձեռակերտի մանկական անբիծ կենցաղին և առատութեան եղջիւրից թափում էր վերեւից շնորք, առողջութիւն, հանձար, առաքինութիւն և զգացմունքի վսեմ թրթիւններ...

Եւ շատ շատ անգամ հրնդէն գնդերը պար ընդունում էին նայում էին, երկիր, դաշտի գեղ տեսքով հիանում, ցնծում, և մարդոց բախտին տենչում, նախանձում:

Մի օր—այդ օրը շարաթ էր—Հայր Եհովիան հանգստանում էր իր լուսեղէն եօթնարփեան խորանում: Երկնային զօրութիւնները պարապ էին: Պարապ էր և Սաղայէլը:

Նա՛ այգաժին Արուսեակին յինուած՝ նայում էր հեռուն, գէպի մոլորակները, աստղերը:

Յանկարծ նրա հայեացքն ընկաւ երկրի վրայ:

Նայեց նա երկմբ, նայեց ակնապիշ...

Յանկարծ մոայլուեց և անհուն վշտով հառաչ արձակեց...

Մի վայրկեանակն փոթորիկ պայթեց, զարկեց աշխարհին. որոտ-դղրդով տրճագանք տուին սարեր ու ձորեր: Մարդիկ կարծեցին՝ արդէն հասել են վախճանի օրեր...

Սաղայէլը կանգնեց. աչեց տիեզերք, դիտեց երկիրը և ինքն իրեն մտորեց.—Այս անձիւր տիեզերքի հրամանատարն եմ ես, ահաւոր, հզօր, և ոգիներին ոչ ոք չէ հասել փառքիս մինչ այսօր...

Իսկ այս չքոտի մարդը... Ինչ է որ...

Սոսկ մի «իբ» փնթոր, չնչին խաղալիք. խղճով բանաւոր...

Եւ ինչ կարիք կար ստեղծել նրան, խնամել, հոգալ, հսկել շարունակ, որ ամենայն ինչ յարմարուի նրան, ծառայի նրան...

Եւ ցեխն՝ Անմահի սիրոյ նպատակ... և նիւթը լինի նիւթին հպատակ...

Ո՛չ, սխալ է... պիտի խառնել, փոխել, ալ իրար պակասել... և ես կստեղծեմ... և ես ինքնիշխան, ազատ կլինեմ... և ո՞վ կարող է կամքիս դէմ կենալ...

—Այո, այդպէս պիտի լինի... գոչեց Սաղայէլը, յօնքերը կնճեց և լճուական թափով մտրակն ուժգին շարժեց...

Եւ չար մտքից ծագած այդ ցնցումից թափուեցին աշխարհի վրայ սոսկալի՛ չարիքներ:

Ծովերն ալեկոծուեցան, փրփրադէղ ալիքներ ամպերի դէմ խոյացան, հեղեղ ու փոթորիկ աշխարհներ աւերեցին:

Ահուզար պատեց ամբողջ աշխարհը: Արարածները ձայն ձայնի տուին, ձիւ արձակեցին, մարդուն զիմեցին, միջնորդ ընտրեցին, Ողորմած Հօրը դանգաւ արեցին...



Ձարթեց Մեծ Հայրը, դիտեց շուրջ բոլոր, կանչեց Իշխանին, հարցրեց պատճառը...

Լո՛ւռ էր Սաղայէլ, մոռնլ ու խոժոռ,

Ողջ մարմնով դողում, սարսում էր Ձարը...

Նորից հարց տուեց Հայրը Գլխառատ.

«Այդ ի՞նչ մեծ յանցանք գործեց երկիրը,

«Որ մի օրուայ մէջ դարձրիք անապատ.

«Յնոյց տուր ինձ նորա յանցանքի գիրը...»

Խօսեց Սաղայէլ խուլ ձայնով խոպոտ,

Տալով պատասխան Արարիչ Պետին.

«Յանցանքը Քոննէ, Աստուած նախանձոտ, *)

«Որ անծայրածիր երկինք ու գետին

«Խլել ես մենակ, տիրում ինքնիշխան,

«Իսկ մեզ, ամենիս դարձրել ես դերի.

«Գերի կամագուրկ, հլու անվախճան,

«Լուկ թշուառ գործիք Քո հաճոյքներէ...»

*) Աստուածաշնչի մէջ Եհովիան ասում է «Եւ եմ Աստուած նախանձոտ»:

«Է՛, ասեց մեղմով Ամենաբարին,
«Ձէ՛, ինձ սրտակէց ընտրել եմ ես քեզ,
«Դու ես տնօրէն արար աշխարհին,
«Ես օրէնք տուող, դու կատարողն ես...
«Ամեն դործերիս մասնակից ես դու,
«Տիեզերքն ամբողջ քեզ է ճանաչում
«Իբրեւ մեծ Ոգի, ահաւոր, ազդու,
«Քեզ Յնովվայի իշխան են կանչում,
«Մի՛թէ այդքանը քեզ չէ բաւական,
«Որ ունայն տենչով յուզում ես հոգիդ...
«Բայց... քեզ ներում եմ, Սաղայէլ իշխան,
«Միրտդ սո՛ւրբ պահիր, սահման դիր խօսքիդ...»

— Ես չեմ կամենում էլ իշխան անուն,
Թէկուղ Արարչի փառքին զուգակից...
Հոգիս վառում է վեհ տենչով անհուն...
Ես վեր եմ ձգտում, վեր այս երկնքից...

Մի ակնթարթում դղրդաց երկին,
Իրար խառնուեցան ահաւոր տարրեր,
Որո՞տ, կայծակներ, ճայթմունք ահագին,
Կարկուտ ու հեղեղ, շարժ, մահ ու աւեր...

Երկնային գնդեր իսկոյն խմբուեցան,
Վեցթևեան սրովբէք, հրեղէն քերովբէք
Սաղայէլի շուրջ կեցան «Ժխածան»,
Որ նա ախեղերք դուրս չգայ երբէք...

Սարսեց Սաղայէլ, երբ տեսաւ իրեն
Անձուկ օղակով անանց բոլորած.
Շանթեր արձակեց հրացայտ ուղեղէն,
Շարժեց մարակը և անեղ գոռաց:

Երկինքը մթնեց, աստղեր թափ կացան,
Արե ու լուսին չքացան անհետ,
Սաղայէլի շուրջ հանգաւ ծիածան...
Նա՛ դարձեալ մենակ՝ Հօօր Պետի հետ...

Ենովվան կանչեց մեծ Ազգարէլին,
Որ տէրն էր բաղդի և սև օրհասի,
Պատուերեց՝ բռնել ~~էն~~ Սաղայէլին,
Ենթարկել նրան ժանտ պատուհասի.
Կաշկանդել հրեղէն կուռ շղթաներով,
Բանտարկել մթին անբարոսի մէջ,
Որ տանջուի անյոյս, անայց, անգործով,
Կուռոյ կարօտով յաւիտեան-անվերջ...

Ահեղ Ազգարէլ սրով շանթավառ,
Ըմբոսա Սաղայէլ մտրակով հուրհեր՝
Խոյացան իրար դէմ դիւցազնաբար,
Վեր-վայր շաղ տուին խոլ արհաւիրքներ...

Շաչում է հրեղէն սուրն Ազգարէլի,
Փայլակ-կայծակով հրդեհում աշխարհ,
Մոնչում, ճայթում մտրակն ահալի,
Փոթորկում, դղրդում տիեզերքն անծայր...

— Խլի՛ր մտրակն այդ վէս ըմբոստից,
Գոչեց զայրազին մռայլ ենովվան,
Ձէնքով է զատւում ծառան իր պետից,
Անգէն էակը երկշոտ է, անձայն...

—Օ՛, ո՛չ, ո՛չ, երբէք, ասեց չար Ոգին,
Ծառան թէկուզ մերկ, թէկուզ գինաթափ,
Բայց միտքն ազատ է, ազատ և հոգին,
Պետին ախոյան, յարատե սարսափ...

—Հեռացիր, երկինք, այս հեռ գրուծանից,
Որոտաց ցասկոտ ենովվան կրկին.
Արտասորի՛ր դրան Մեր լոյս խորանից,
Էլ թող չերևի երբէք Իմ աչքին...

...Փոխուեց ամեն ինչ... Իջաւ սև խաւար,
Էօթնծալ երկինք կացաւ անշրպետ,
Մերժուեց ապստամբ մտքի ղեկավար,
Հրեղէն շարքերից ջնջուեցաւ անհետ...

Լաւ, գոռաց Չարը լի կատաղութեամբ,
Դէհ, որ այդպէս է, ոչ ինձ և ոչ Քեզ...
...Այսօր ինձ միայն տեսար ապստամբ,
Այսուհետ կտեսնես անհամար ինձ պէս...

Ասեց Սադայէլ, ջարդեց իր մտրակ,
Գզգզեց հիւսած իւրաքանչիւր վարդ,
—Գնացէ՛ք, գոչեց, լցրեցէ՛ք աշխարհ,
Դարձէ՛ք երկրային բիւր-բիւր յաւերժհարս...

Դո՛ւք անհուն դարեր՝ խմբովին հիւսած՝
Իմ հզօր ձեռքում զէնք էիք հլու—
Այսուհետ դարձեալ՝ ես ձեր գոռ ասուած՝
Ձեզնով եմ վրէժս յաւերժ լուծելու...
Նա՛ Բարի, ես՝ Չար, իբար միշտ ընդդէմ,
Նա՛ երկնից Արքայ, ես՝ անդնդի խոր,
Նորա ձեռքի գործ ձեզնով պիտ քանդեմ,
Մինչև ես ազնա լինեմ թագաւոր...

—Դէհ, ֆառս բարեաւ, Վէհ Արարչապետ,
Եւ դո՛ւք, երկնային եզերք անսահման,
Ես ձեզնից մերժուած, ատելի, անպէտ,
Կերթամ քաշելու սև օր յաւիտեան...

Եւ դո՛ւք, ոգիներ, գունդ-գունդ, հազար-բիւր,
Դո՛ւք, ենովվայի ծառաներ անբառ,
Միշտ դողդոջ, անգոյն, միշտ հեզահամբոյր,
Միշտ առանց մտքի, հողմի պէս թշուառ...

Դուք՝ ձեր անհամար գնդերով հրատ՝
Մեծ ենովվայի լոկ կամքին գերի՝
Ձեր վեհ բարձունքից իմ դէմ անընդհատ,
Պիտ վարէք կռիւ անվերջ դարերի...

Դուք՝ անթիւ հոյլ-բոյլ, հզօր, ահարկու,
Ես՝ անզօր, անզէն, ես՝ թոյլ, միայնակ,
Սակայն անվհատ ջանքերով հուժկու
Պիտի պայքարեմ, տանեմ յաղթանակ...

Իսկ դո՛ւ, թքոտ կաւ, դո՛ւ, խօսողն մկնիկ,
Որ այդքան յարգի տիրացար յանկարծ,
Դէպի քեզ կուղղեմ վրէժիս գոռ ալիք՝
Երգ ու ծիծաղդ փոխելու սո՛ւգ, լաց...

Հոգուդ կծորեմ թունաւոր կասկած՝
«Կա՞յ, թե՛ չկայ»ով տոչորուես անանց.
Մտքիդ՝ խուզարկու գիտութեան մի կայծ,
Դէմդ՝ փոթորիկ, խաւար անթափանց...

Եւ քո աւիւնի թռիչք սրաթեւ
Միշտ այրուած, մոխիր՝ սիրոյ կրակում...
Եւ վսեմ իղձեր, բաղձանք յարատեւ
Խորտակում, կաշկանդ՝ վշտի կապանքում...

Եւ փուշը՝ բուսած քո գրկից, ծոցից՝
Քեզ կխոցոտի մեղկ, հուր տենչանքով...
Եւ կտապակուես քո կրքից, բոցից,
Մինչև հող դառնաս դու բիւր տանջանքով...

Ո՛վ իմ յոյս խաբէսիս, դո՛ւք, անմահ վարսեր,
Ահա ցրւում եմ ձեզ երամ-երամ.
Թռէք, մարմնացէ՛ք, դարձէ՛ք քնքոյշ սեռ,
Փթթեցէ՛ք կեանքով բոյր-վարդ անթառամ...
Դուք՝ այգ արշալոյս՝ հագած բոսոր վառ,
Հեզիկ արևիկ՝ շողշող, բոցավառ.
Դուք՝ կսկոն գարուն, թելթելիկ, շարմաղ,
Եթեր թիթեռնիկ, խինդ, ծափ ու ծիծաղ:
Դուք՝ գոհար ցօղի խափղը քնքոյշ,
Նազիկ դեփուռի պաշպշուկն անոյշ.
Աղբիւրի քրքիշ, մրմունջ քնօրօր,
Շողակ կոհակի կաքաւն ու շորոր.
Դուք՝ ծաղկանց բոյրը, երանգը փայլ-փայլ,
Ալախօս թռչնոց ոգեշունչ դայլայլ.
Դուք՝ հեռ յոյգերի փրփուր անըջանք.
Շոյուն երազներ, հմայիչ տենչանք:
Արբուն կենցաղի դիցական տաճար,
Հօգօրների փառք, իմաստնոց հանճար:
Դուք՝ քար բնութեան բոցը կենսատու,
Կեանքի յաղթական սուսերը հատու...
Յաւերժ «որոնման» փարոս մշտավառ,
Սիրակոծ սրտի անյաղթ ղեկավար...

Դուք՝ բնագրական եռման փոթորիկ,
Սին ցնորքների յարաշարժ ալիք,
Սրտերի շիրիմ, կեանքի գերեզման,
Մահաբեր կապանք մտքի սաւառման...

Եսամոլութեան դուք քուրմ մոլեռանդ,
Ստի, կեղծիքի աղբիւր յորդառատ...
Դուք՝ մահադեղ թոյն՝ մեղրածոր ձուլած,
Անյոյս, անյոյս բանտ, վիշտ, արցունք ու լաց...

Խանդավառ «կրքի» յարավէժ հրաբուխ,
Զազիր մոլութեանց խնկարկու սև ծուխ:
«Գթասիրտ» դահիճ, հառաւորսիմ օձ,
«Անձնոտեր» դաւաճան, «մտերիմ» խայթոց.
«Հիսարսան» անդունդ, «գեղասկի» թակարդ.
«Աղոռնիկ» աղուէս, լարախաղաց սարդ,
«Զովարար» վամպիր, ապուզնա միմոս,
«Լաշկիւսն» գիշատիչ, «ստոր» կոկորդիլոս...
Դուք՝ Սադայէլիս հլու հպատակ,
Խուլ ձգտումներիս հզօր օժանդակ,
Ո՛վ իմ բոց վրէժ, շնորհագեղ վարսեր,
Վեհին ախոյան, նախանձավառ սէր,
Թռէք, թափուեցէք, լցրեցէք աշխարհ,
Գոռող լոյսի դէմ մղելու պայքար:

Եւ այնուհետեւ ամենայն գիշեր
Փունջ-փունջ թափում է Սադայէլն անվերջ
Հուրժամ մտրակից զզգրած վարսեր—
Վարդ, շուշան հարսեր—մեր աշխարհի մէջ:

Ու սլանում են վարսերը կայծուն—
—Այն թռչող աստղեր—ճեղքելով եթեր,
Գալիս են աշխարհ, ժպտով սիրասուն
Գերում, կաշկանդում թէ ծառայ, թէ տէր...

Իսկ Սադայէլը՝ խրոխտ, ահաւոր՝
Լուսոյ, բարութեան միշտ ներհակ արթուն—
Մտրակը ձեռին՝ այն հեռ «գիսարսու»
Շրջում է, պտտում, աշխարհն է դիտում...

Ազգեր են զնում, ազգեր են գալիս,
Միշտ նոր-նոր վարսեր՝ այլ ձև, այլ տարագ՝
Բիւր չարիքներով, ցաւով թունալից,
Աշխարհ են բերում կռիւ, աւերած...

Եւ ինչքան հերոս քաջեր փառունակ՝
Այդ ցաւով հիւծուած՝ ընկնում են Լեւտան.
Եւ քանի՜ անհուն դարեր շարունակ
Արիւն է լալիս սիրտը մարդկութեան...

Ու նենգ, դիւակա՞ն քրքիջով զազիր
Խնդում է, հրճում Զարը դաւաճան,
Թէ Եհովայի այս զրախտ երկիր
Շուտով, հա՛ շուտով կստանայ վախճան...

.
.

Բայց եթէ Չար-Մութ տիրեց ամենուր,
Սաղայէլը նենդ տարաւ յաղթանակ,
Զի՛ ճայթի, արդեօք, Ազգարէլի սուր,
Որ ծնուի նոր կեանք և նոր ժամանակ...





ՀՀ Ազգային գրադարան



NL0375393

6 0898

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.